

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2023 թվականի ապրիլի 10-ից 14-ը

Բելառուսի Հանրապետություն (ք. Մինսկ) գործուղման արդյունքների մասին

- 1. Անունը, ազգանունը՝** Վարդան Մաթևոսյան, Վահան Սահակյան
- 2. Զբաղեցրած պաշտոնը՝** ՀՀ ՊԵԿ Մաքսային վիճակագրության և եկամուտների հաշվառման վարչության պետի տեղակալ, ՀՀ ՊԵԿ Մաքսային վիճակագրության և եկամուտների հաշվառման վարչության Մաքսային վիճակագրության և տեղեկատվության բաժնի գլխավոր մաքսային տեսուչ
- 3. Գործուղման վայրը և ժամկետները՝** ք.Մինսկ, 10.04.2023-14.04.2023թթ.
- 4. Հրավիրող կողմը՝** Բելառուսի Հանրապետության ազգային վիճակագրական կոմիտե
- 5. Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը՝**
Եվրասիական տնտեսական հանձնաժողովի վիճակագրական խորհրդատվական կոմիտեի 05.10.2022թ. թիվ 3-KK արձանագրության համաձայն 10.04.2023-14.04.2023թթ. ք.Մինսկում կայացավ աշխատանքային հանդիպում, որի ընթացքում կատարվեցին ՀՀ և ԲՀ փոխադարձ առևտրի վիճակագրական տվյալների համադրման աշխատանքներ:
- 6. Քննարկված թեմաները՝** ՀՀ և ԲՀ փոխադարձ առևտրի վիճակագրական տվյալների համադրում, առկա շեղումների ուսումնասիրություն, պատճառների վերհանում:
- 7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝**
 1. ՀՀ և ԲՀ փոխադարձ առևտրի տվյալների հավաքագրման կազմակերպումը
 2. ՀՀ արտահանման և ԲՀ ներմուծման վիճակագրական տվյալների համադրություն
 3. ՀՀ ներմուծման և ԲՀ արտահանման վիճակագրական տվյալների համադրություն

4. Փոխադարձ առևտրի վիճակագրական տվյալների հավաքագրման ամբողջականության ապահովում:

Փոխադարձ առևտրի վարման համար հիմք են հանդիսանում վիճակագրական ձևերում, ապրանքային հայտարարագրերում (ԲՀ-ից ներմուծվող ակցիզային դրոշմապիտակով ապրանքներ) և տարանցման հայտարարագրերում (ՀՀ-ից ֆիզիկական անձանց կողմից արտահանվող գյուղատնտեսական ապրանքների դեպքում) պարունակվող տվյալները:

Աշխատանքային խմբի անդամները փաստեցին, որ փոխադարձ առևտրի ոլորտում ՀՀ-ի և ԲՀ-ի կողմից տվյալների հավաքագրումը իրականացվում է համաձայն ԵԱՏՀ 25.12.2018թ. հաստատված <<ԵԱՏՀ անդամ պետությունների կողմից ապրանքների փոխադարձ առևտրի վիճակագրության վարման>> թիվ 210 միասնական մեթոդաբանությամբ:

2022թ. ընթացքում ըստ Բելառուսի Հանրապետության տվյալների՝ ԲՀ ներմուծումը ՀՀ-ից կազմել է 76,9 մլն ԱՄՆ դոլար, ըստ ՀՀ տվյալների՝ ՀՀ-ից ԲՀ արտահանումը կազմել է 77 մլն ԱՄՆ դոլար: Շեղումը կազմել է 127 հազ. ԱՄՆ դոլար կամ 0,2%:

Նույն ժամանակահատվածում ըստ ՀՀ տվյալների՝ ՀՀ ներմուծումը ԲՀ-ից կազմել է 118,6 մլն ԱՄՆ դոլար, ըստ ԲՀ տվյալների՝ ԲՀ-ից ՀՀ արտահանումը՝ 106,5 մլն ՀՀ դրամ: Շեղումը կազմել է 12,1 մլն ՀՀ դրամ կամ 11,3%:

ԵԱՏՀ միասնական ԱՏԳ ԱԱ քառանիշ մակարդակում դիտարկվեց առավել խոշոր շեղում ունեցող ապրանքները և բացահայտվեցին նշված շեղումների առաջացման հիմնական պատճառները, որոնցից են.

- ✓ հայկական և բելառուսական կազմակերպությունների կողմից չներկայացված կամ ոչ ճիշտ ներկայացված վիճակագրական ձևերը,
- ✓ մեթոդաբանության տարբեր մեկնաբանությունները,
- ✓ ՀՀ-ի և ԲՀ-ի միջև ընդհանուր սահմանի բացակայությամբ պայմանավորված ժամանակային շեղումը:

Մասնավորապես, ԱՏԳ ԱԱ 2208 (Էթիլային սպիրտ, չբնափոխած, 80 ծավ.%-ից պակաս սպիրտի խտությամբ, սպիրտային թուրմեր, լիկյորներ եւ այլ սպիրտային ըմպելիքներ), 9619 (կանանց և երեխաների հիգիենայի պարագաներ, մանկական

խանձարուրներ), 7604 (ծողեր եւ տրամատներ այլումինե), 8528 (մոնիտոր և պրոյեկտոր) ապրանքային դիրքերում առկա շեղումները պայմանավորված են հայկական ընկերությունների կողմից վիճակագրական հաշվետվությունների չներկայացմամբ կամ սխալ ներկայացմամբ, իսկ 0802 (այլ ընկույզներ թարմ կամ չորացրած, կճեպից մաքրած կամ չմաքրած, կեղելով կամ կեղեւած), 8539 (լամպեր շիկացման էլեկտրական կամ գազապարպման, ներառյալ լամպեր հերմետիկ լույսի ուղղորդումով, ինչպես նաեւ ուլտրամանուշակագույն կամ ինֆրակարմիր լամպեր, աղեղային լամպեր), ապրանքային դիրքերում առկա շեղումները՝ Բելառուսական ընկերությունների կողմից վիճակագրական ձևերի չներկայացմամբ կամ սխալ ներկայացմամբ:

2710 (նավթ եւ նավթամթերք (ոչ հում) ապրանքային դիրքում առկա շեղումը պայմանավորված է այն հանգամանքով, որ Հայաստանում լիցքավորված վառելիքը (բունկերային վառելիք) բելառուսական կողմում ներկայացվում է որպես ներմուծում, իսկ հայկական կողմում որպես արտահանում չի ձևակերպվում:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Հանդիպման ընթացքում կողմերը բացահայտեցին հայկական և բելառուսական այն ընկերություններին, որոնք չէին ներկայացրել կամ թերի էին ներկայացրել վիճակագրական ձևեր և պայմանավորվեցին լիարժեք ու արժանահավատ տեղեկատվության ստացման նպատակով ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ:

Հանդիպման ավարտին կողմերը ստորագրեցին ՀՀ և ԲՀ 2022թ. փոխադարձ առևտրի վիճակագրական տվյալների համադրման աշխատանքների արձանագրությունը, ինչպես նաև երկուստեք կարևորեցին նման հանդիպումների ամենամյա ֆորմատով անցկացումը:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատվությունները, ակնկալվող արդյունքները՝

Կողմերը քննարկեցին նաև ԵԱՏՄ անդամ պետությունների ապրանք չհանդիսացող ապրանքների տեղափոխման և հաշվառման առանձնահատկությունները փոխադարձ առևտրում և եկան այն ընդհանուր կարծիքին, որ անհրաժեշտ է ԵԱՏՀ հարթակում քննարկել փոխադարձ առևտրի վիճակագրության վարման մեթոդաբանության մեջ ապրանքների կարգավիճակի հետ կապված հարցը:

ՀՀ ՊԵԿ Մաքսային վիճակագրության և եկամուտների հաշվառման վարչության Մաքսային վիճակագրության և տեղեկատվության բաժնում կազմակերպվեց քննարկում, որի ընթացքում բաժնի մյուս աշխատակիցներին ներկայացվեցին գործողման ընթացքում կատարված աշխատանքները, բարձրացվեցին հարցեր, որոնք ստացան իրենց պատասխանը:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

Վարդան Մաթևոսյան



17.04.2023թ.